«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«07» օգոստոսի 2015թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

Հ. Թունյան

ԳԲԽ-28/15 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 02557321) 20.07.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Կոմպմարկետ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 20.07.2015թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ մասնակցել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԿԳՆԲԸԱՊՁԲ-15-1» ծածկագրով բաց

ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

1. ՀՀ կրթության և գիտության նախարարությունը «ՀՀ ԿԳՆԲԸԱՊՁԲ-15-1» ծածկագրով ընթացակարգի 16-րդ չափաբաժնի մասով որոշում է կայացրել կնքել պայմանագիր 43.200.000 (քառասուներեք միլիոն երկու հարյուր հազար, առանց ԱԱՀ) ՀՀ դրամ ընդհանուր գումարով, այն դեպքում, երբ տվյալ չափաբաժնի համար Ընկերության կողմից ներկայացված հայտով առաջարկվել է պայմանագիրը կատարել 36.000.000 (երեսունվեց միլիոն, առանց ԱԱՀ) ՀՀ դրամ ընդհանուր գումարով, որի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված 1-ին մասի 2-րդ կետը:

2. Ընթացակարգի 16-րդ չափաբաժնի մասով մեկ չափաբաժնի մեջ գնման առարկա է սահմանվել 18 ապրանքատեսակների հավաքածու՝ ընդգրկելով գործունեության տարբեր ոլորտներ ներկայացնող ապրանքատեսակներ, որի արդյունքում անհիմն կերպով սահմանափակվել է գնումների գործընթացին հնարավոր մասնակցությունը՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերը, 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, քանի որ ձեռք բերվելիք ապրանքները տարանջատելու դեպքում ակնհայտորեն կարելի է ընթացակարգի համար ապահովել ավելի լայն մասնակցություն և ստանալ ավելի ցածր գնային առաջարկներ:

3. «ՀՀ ԿԳՆԲԸԱՊՁԲ-15-1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 1-ին մասի 2-րդ բաժնով «Մասնագիտական փորձառություն» ենթաբաժնում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը մինչև պայմանագրի կնքումը պարտավոր է ներկայացնել գնման առարկայի իսկությունը /մատակարարված կամ մատակարարվելիք/ հավաստող՝ արտադրողի կողմից տրամադրված վկայականի բնօրինակը և պատճենը: Տվյալ պահանջի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով ընթացակարգի վերաբերյալ պարզաբանումների համար նախատեսված ժամկետում Ընկերությունը երկու անգամ դիմել է Պատվիրատուին՝ հստակեցնելու վերը նշված պահանջը (բողոքին կից ներկայացվել են Ընկերության հարցադրումները և Պատվիրատուի տրված պարզաբանումները՝ արտատպված www.armeps.am համացանցային կայքից): Մասնավորապես, Ընկերությունը խնդրել է պարզաբանել, թե ինչ պետք է հասկանալ գնման առարկա հանդիսացող հավաքածուի յուրաքանչյուր ապրանքի համար նրա իսկությունը հավաստող՝ արտադրողի կողմից տրամադրված վկայական ասելով (այդ

թվում բնօրինակը), որին ի պատասխան Պատվիրատուն հայտնել է, որ տվյալ պահանջը նախատեսված է ՀՀ կառավարության 2011թ փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ /մինչև 30.01.2015թ կատարված փոփոխությունը/ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 81-րդ կետի 2-րդ ենթակետով և այն վերաբերում է համակարգչային և կենցաղային տեխնիկային, որոնց համար ներկայացվում է ապրանքի իսկությունը հավաստող՝ արտադրողի կողմից տրամադրված վկայականի բնօրինակը և պատճենը:

«Կոմպմարկետ» ՍՊԸ-ն ևս մեկ անգամ խնդրել է պարզաբանել, որ եթե հայտնի է ապրանքի իսկությունը հավաստող կոնկրետ փաստաթուղթ, որը կարող է տրամադրել արտադրողը իր կողմից արտադրված յուրաքանչյուր ապրանքի համար և նրա ամեն մի գնորդի, ապա խնդրել է հրապարակել այդ փաստաթղթի անվանումը: Յուրաքանչյուր համակարգչային կամ կենցաղային տեխնիկա ուղեկցվում է նրա նկարագրությանը և շահագործմանը վերաբերվող՝ արտադրողի կողմից տրամադրված ուղեցույցով, և միգուցե դա պետք է հասկանալ որպես իսկությունը հավաստող վկայական: Նախկինում նման պահանջ հանդիպել է այլ պատվիրատուների մոտ և, որպես կանոն, պատվիրատուի այդպիսի պահանջի նկատմամբ հետևողականություն ցուցաբերելու դեպքում ընթացակարգերը չեն կայացել, քանի որ ոչ մի հնարավոր մասնակից գոյություն չունեցող փաստաթուղթ չի կարող ներկայցնել:

Պատվիրատուն վերը նշված պարզաբանման կապակցությամբ հայտնել է, որ տվյալ պահանջը նախատեսված է ՀՀ կառավարության 2011թ փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ /մինչև 30.01.2015թ կատարված փոփոխությունը/ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 81-րդ կետի 2-րդ ենթակետով և այն վերաբերում է համակարգչային և կենցաղային տեխնիկային, որոնց համար ներկայացվում է ապրանքի իսկությունը հավաստող՝ արտադրողի կողմից տրամադրված վկայականի բնօրինակը և պատճենը:

Ընկերությունը կրկին խնդրել է պարզաբանել, որ եթե երկու դեպքում էլ հղում է կատարվել մի կարգի վրա, որը ուժը կորցրած է հայտարարվել ՀՀ կառավարության 30.01.2015թ թիվ 105 որոշմամբ և նույն որոշմամբ սահմանվել է գնումների գործընթացի կազմակերպման նոր կարգ, որի 8-րդ բաժնում սահմանված մասնակիցների որակավորման պահանջներում որևէ հիշատակում չկա որպես որակավարումը

հաստատող փաստաթղթեր գնման առարկայի իսկությունը հաստատող փաստաթղթերի ներկայացման պահանջի վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության խնդրանքը՝ տրամադրել հանձնաժողի նիստերի արձանագրությունների մաս կազմող՝ ընթացակարգի այլ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը: Փաստաղթերին ծանոթանալու խնդրանքով մի քանի անգամ հանձնաժողովին էլեկտրոնային նամակով դիմելուց հետո, Ընկերությունը ստիպված է եղել դիմելու Կենտրոնի թեժ գծին, որի արդյունքում միայն հնարավորություն է ստացել մասնակիորեն ծանոթանալու իրեն հետաքրքրող փաստաթղթերի մի մասի հետ, ինչի արդյուքնում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը:

5. «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն չունի նախկինում սեղաններ, աթոռներ և գրատախ-տակներ մատակարարելու փորձ և հանձնաժողովին տեղեկացվել է, որ այդ մասով մատակարարման աշխատանքները կատարվելու է նման ապրանքների մատակարարման փորձ և կահույքի սեփական արտադրամաս ունեցող «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ի հետ համագործակցության պայմանագրի շրջանակներում՝ համագործակցության պայմանգիրը որակելով որպես գործակալության պայմանագիր: Ապացուցելու համար, որ Ընկերության կողմից ընտրված գործընկերն առընչություն ունի գնման ընթացակարգով պահանջվող գնման առարկայի հետ, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն հանձնաժողովին է ներկայացրել «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ի և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև կնքված և գործող շրջանակային համաձայնագիրը: Քանի որ պահանջվող սեղանների, աթոռների և գրատախտակների ընդհանուր գումարը կազմել է առաջարկված պայմանագրային գումարի մոտ տասնմեկ տոկոսը, ապա Հրավերի 7.3.1 կետի պահանջներին համապատասխան՝ Ընկերության կողմից չի ներկայացվել համագործակցության «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ի որակավորումը հավաստող այլ փաստաթղթեր: Հանձնաժողովը գտել է, որ Ընկերության համագործակցության պայմանագիրը համատեղ գործունեության /կոնսորցիումով/ պայմանագիր է և այս մասով նույնպես հայտարարել է, որ վերջինիս հայտը ենթակա է մերժման, քանի որ Ընկերությունը չի ներկայացրել «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ի որոկավորումը հավաստող փաստաթղթերը, իսկ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ի որակավորումը հաստատող փաստաթղթերի պահանջը հակասում է «Գնումների մասին»

ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասին, քանի որ դրանք չեն պահանջվում Հրավերի 7.3.1 կետով:

«Կոմպմարկետ» ՍՊԸ-ն խնդրել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ուսումնական արհեստանոցների և լսարանների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԿԳՆԲԸԱՊՁԲ-15/1» ծածկագրով բաց ընթացակարգի 16-րդ չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովի պայմանագիր կնքելու մասին որոշումը չեղյալ հայտարարել և նոր ընթացակարգ հայտարարել, կամ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին ճանաչել որպես ընտրված մասնակից:

ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացրած 27.07.2015թ. թիվ 04/19.3/8646-15 գրության վերաբերյալ Ընկերությունը 06.08.2015թ. գրությամբ հայտնել է, որ ՀՀ կառավարության 2014թ դեկտեմբերի 18-ի թիվ 1515-Ն որոշմամբ հաստատված նախարարության 2015թ գնումների անվանացանկում /պլանում/ 2015թ պետական բյուջեի «Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումների շարունակություն և զբաղվացության մշակում» ծրագրի շրջանակներում նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների համար գույքի և սարքավորումների ձեռբերում» ծրագրով ձեռք բերվող ուսումնական արհեստանոցների և լսարանների լրակազմերի գնման գործընթացը նախատեսվել է իրականացնել բաց ընթացակարգով:

«ՀՀԿԳՆԲԸԱՊՁԲ-15/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի համաձայն՝ գնման առարկա են հանդիսացել ուսումնական արհեստանոցները և լսարանները, որոնք խմբավորվել են 16 չափաբաժիններում: Ընդ որում, յուրաքանչյուր չափաբաժնով նախատեսվել է մեկ տեսակի արհեստանոց կամ լսարան, որն իր մեջ ներառել է տարբեր ապրանքատեսակներ, մասնավորապես, 16-րդ չափաբաժնով /ուսումնական լսարան-16/ նախատեսվել են համակարգչային գույք և սարքավորումներ, սակայն իրականում դրանք 15 անվանում համակարգչային սարքավորումներ են և 3 անվանում սեղաններ, աթոռներ և գրատախտակ, որոնք «համակարգչային գույք» որակելը ավելի քան արհեստական է և ընդհանրապես, համակարգչային տեխնիկայի մատակարարների հետ առընչություն չունի և դրանց խմբավորելը համակարգչային տեխնիկայի հետ մեկ լրակազմում խանգարող հանգամանք է արդյունավետ գնում կատարելու համար:

Ընկերությունը պնդել է, որ իր համար շարունակում են անհասկանալի մնալ Պատվիրատուի կողմից որակավորման փաստաթղթերի վերաբերյալ ներկայացված պարզաբանումները:

Այնուամենայնիվ, վերոհիշյալ գրությամբ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն ընդունել է այն փաստը, որ ներկայացված բողոքի մեջ ՀՀ կառավարության 105-րդ որոշման վրա հղում կատարելը սխալ էր:

Ընկերությունը հաստատել է նաև, որ իրեն տրամադրվել են ընթացակարգի այլ մասնակիցների ներկայացրած որակավորմանը վերաբերվող փաստաթղթերը Կենտրոնի թեժ գծին դիմելուց հետո:

«Կոմպմարկետ» ՍՊԸ-ն հայտնել է, որ ներկայացրել է համագործակցության պայմանագիր, իր առաջ խնդիր չդնելով այն դասակարգել որպես գործակալության կամ համատեղ գործունեության պայմանագիր:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը 27.07.2015թ. թիվ 04/19.3/8646-15 գրությամբ հայտնել է, որ ՀՀ կառավարության 2014թ դեկտեմբերի 18-ի թիվ 1515-Ն որոշմամբ հաստատված նախարարության 2015թ գնումների անվանացանկում /պլանում/ 2015թ պետական բյուջեի «Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումների շարունակություն և զբաղվածության մշակում» ծրագրի շրջանակներում նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների համար գույքի և սարքավորումների ձեռբերում» ծրագրով ձեռք բերվող ուսումնական արհեստանոցների և լսարանների լրակազմերի գնման գործընթացը նախատեսվել է իրականացնել բաց ընթացակարգով:

«ՀՀԿԳՆԲԸԱՊՁԲ-15/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի համաձայն՝ գնման առարկա են հանդիսացել ուսումնական արհեստանոցները և լսարանները, որոնք խմբավորվել են 16 չափաբաժիններում: Ընդ որում, յուրաքանչյուր չափաբաժնով նախատեսվել է մեկ տեսակի արհեստանոց կամ լսարան, որն իր մեջ ներառվել է տարբեր

ապրանքատեսակներ, մասնավորապես, 16-րդ չափաբաժնով /ուսումնական լսարան-16/ նախատեսվել են համակարգչային գույք և սարքավորումներ:

Հաշվի առնելով յուրաքանչյուր չափաբաժնում ներառված ապրանքների բազմազանությունը և դրանց առանձին տեսակների ձեռքբերման և ամբողջացման գործընթացի անհնարինությունը, նշված գործընթացը հաստավել է լրակազմով՝ բաց ընթացակարգով, այլ ոչ թե առանձին ապրանքատեսակներով՝ գնման այլ ձևերով:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը Կենտրոնին հայտնել է, որ «ՀՀԿԳՆԲԸԱՊՁԲ-15/1» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը 30.03.2015թ հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում՝ ընթացակարգի օրը նախատեսելով 2015թ մայիսի 11-ը: Նշված հրավերում կատարվել է փոփոխություն՝ շտկվել են «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 07.04.2015թ արձանագրված անհամապատասխանությունները, ինչի արդյունքում ընթացակարգի օր է սահմանվել 2015թ մայիսի 21-ը: Նշված գործընթացը ամբողջությամբ ենթարկվել է ՀՀ կառավարության 2011թ փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով սահմանված պահանջներին /մինչև 30.01.2015թ կատարված փոփոխությունը/, քանի որ ՀՀ կառավարության 30.01.2015թ թիվ 105-Ն որոշումը ուժի մեջ է մտել 2015թ. ապրիլի 1-ից, որի 7-րդ կետի համաձայն՝ մինչև որոշումն ուժի մեջ մտնելը սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումները սկսելու պահին գործող իրավական ակտերով: «ՀՀԿԳՆԲԸԱՊՁԲ-15/1» ծածկագրով հայտարարված բաց ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ բաժնով ապրանքի իսկությունը հավաստող՝ արտադրողի կողմից տրամադրված վկայականի բնօրինակի և պատճենի ներկայացման պահանջը նախատեսվել է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ /մինչև 30.01.2015թ կատարված փոփոխությունը/ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 81-րդ կետի 2-րդ ենթակետը: Ի դեպ, բաց ընթացակարգի հրավերը կազմելիս՝ նախարարությունը օգտվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից www.gnumner.am կայքում տեղադրված օրինակելի ձևից:

Ինչ վերաբերում է «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին տրված ապրանքի իսկությունը հավաստող՝ արտադրողի կողմից տրամադրված վկայականի ներկայացման պահանջի վերաբերյալ ոչ հստակ պարզաբանմանը, ապա Պատվիրատուն հայտնել է, որ մինչև

հայտերի բացման նիստը Ընկերության կողմից կատարվել են հարցադրումներ, որոնց վերաբերյալ տրվել են համապատասխան պարզաբանումներ: Արդյունքում Ընկերության կողմից ներկայացվել է գնման ընթացակարգին մասնակցելու հայտ, ներառյալ հայտարարություն՝ որակավորման պահանջներին համապատասխանության մասին: Պատվիրատուն նշել է, որ ապրանքի իսկությունը հավաստող՝ արտադրողի կողմից տրամադրված վկայականի ներկայացման պահանջի վերաբերյալ Ընկերությանը տրված պարզաբանումը համընկնում է ՀՀ ֆինանսների նախարարությունից նույն հարցի վերաբերյալ ստացված պարզաբանման հետ: «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի այն պնդումը, որ նշված պահանջը ուժը կորցրել է ՀՀ կառավարության 30.01.2015թ թիվ 105-Ն որոշմամբ՝ անհիմն է, քանի որ գնման գործընթացը ենթարկվել է ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով /մինչև 30.01.20215թ կատարված փոփոխությունը/ սահմանված պահանջներին:

Պատվիրատուն հայտնել է, որ էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան, հայտերի գնահատման գործընթացի արդյունքում «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին, որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից, առաջարկվել է ներկայացնել որակավորումը հավաստող փաստաթղթերը, ներառյալ ապրանքի իսկությունը հավաստող՝ արտադրողի կողմից տրամադրված վկայականները, իսկ վերջինիս կողմից փաստաթղթերը ներկայացնելուց հետո սահմանված ժամկետում առաջարկվել է շտկել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները, սակայն Ընկերության կողմից չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, այդ թվում չեն ներկայացվել ապրանքի իսկությունը հավաստող՝ արտադրողի կողմից տրամադրված վկայականները, ինչի փոխարեն Ընկերությունը ներկայացրել է իր կողմից հաստատված հայտարարություն ապրանքի իսկության մասին, որը չի դիտվել որպես պահանջվող վկայական, և հանձնաժողովը որոշում է կայացրել մերժել վերջինիս հայտը և առաջարկել որակավորման փաստաթղթեր ներկայացնել երկրորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Երկրորդ տեղը զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են անհրաժեշտ փաստաթղթերը՝ ներառյալ վկայականները, որոնց համապատասխանությունը ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /մինչև

30.01.20215թ կատարված փոփոխությունը/ 81-րդ կետի 2-րդ ենթակետին գնահատելու համար հարցում է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն և 09.07.2015թ թիվ 1/73-1/17995-15 գրությամբ ստացվել է վերջինիս դիրքորոշումը: 2015թ հուլիսի 10-ին տեղի է ունեցել գնահատող հանձնաժողովի հերթական նիստը: Նշված նիստին ներկա է եղել նաև «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի տնօրենը, ում տրամադրվել են երկրորդ տեղը զբաղեցրած մասնակցի («Էվրիկոմպ Թեք» ՍՊԸ-ի) կողմից ներկայացված ապրանքների իսկությունը հավաստող վկայականների պատճենները՝ տեղում ծանոթանալու համար: Մասնակցի կողմից վկայականներին ծանոթանալու պահանջը վերաբերել է ոչ բոլոր վկայականներին, այլ մեկ-երկու օրինակելի ձևերին, որոնք հանձնաժողովի կողմից տրամադրվել են առանց խոչընդոտների: Ընկերության նշված պահանջը բավարարվել է նաև «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին ներկայացված ահազանգի միջոցով:

Ինչ վերաբերում է նրան, որ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն համոզված չէ «Էվրիկոմպ Թեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վկայականների պահանջվող քանակի առկայության և դրանց համապատասխանության մեջ, ապա ըստ Պատվիրատուի՝ մասնակիցների ներկայացված փաստաթղթերի գնահատումը, ինչպես նշվել է նաև ՀՀ ֆինանսների նախարարության տեսակետում, վերաբերում է բացառապես հանձնաժողովի իրավասություններին:

Պատվիրատուն տեղեկացրել է նաև, որ «Էվրիկոմպ Թեք» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունները շտկելու համար սահմանված ժամկետում ներկայացվել են վկայականների բնօրինակները, որի արդյունքում հանձնաժողովը որոշում է կայացրել հաղթող ճանաչել վերջինիս, և դրա վերաբերյալ նիստի արձանագրությունը ուղարկվել է «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին՝ իր իսկ պահանջի հիման վրա, իսկ Ընկերության կողմից բնօրինակների ներկայացման մասին տեղեկություն չունենալը չի ենթադրում, որ դրանք չեն ներկայացվել:

Պատվիրատուն հայտնել է, որ 21.05.2015թ կայացած «ՀՀԿԳՆԲԸԱՊՁԲ-15/1» ծածկագրով բաց ընթացակարգի բացման նիստի արձանագրությունը սահմանված կարգով՝ armeps համակարգով, ներկայացվել է Ընթացակարգի բոլոր մասնակիցներին: Ինչ վերաբերում է հանձնաժողովի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետի խախտմանը, ապա այն անհիմն է, քանի որ գնման ընթացակարգի արձանագրությունը կազմվում է գնման գործընթացի ավարտից՝ պայմանագրեր կնքելուց

կամ գործընթացը չկայացած հայտարարելուց հետո և այն ներառում է նաև բողոքարկման գործընթացի մասին տեղեկությունները:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը հայտնել է, որ նախքան հայտերի ներկայացումը, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի պահանջով պարզաբանվել է, որ նա պետք է ունենա նախկինում կատարված գնման առարկա հանդիսացող կամ համանման ապրանքների մատակարարման պայմանագրեր, հակառակ դեպքում կարող է նույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) կամ գործակալության պայմանագրերով: Գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի 16-րդ չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո Ընկերությանը առաջարկվել է ներկայացնել հրավերով նախատեսված որակավորումը հավաստող փաստաթղթերը (տեղեկությունները): Ընկերության կողմից ներկայացված համագործակցության թիվ 15/0515-01 պայմանագիրը եղել է թերի, որը սահմանված ժամկետում վերջինիս կողմից շտկվել է՝ միաժամանակ հավաստելով, որ այն գործակալության պայմանագիր է: Սակայն, հանձնաժողովը ամբողջական պայմանագրի դրույթները ուսումնասիրելու արդյունքում արձանագրել է, որ համագործակցության պայմանագիրը չի կարող համարվել գործակալության պայմանագիր, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 806-րդ հոդվածի համաձայն՝ «Գործակալության պայմանագրով մի կողմը (գործակալը) պարտավորվում է վարձատրությամբ մյուս կողմի (պրինցիպալի) հանձնարարությամբ, իր անունից, սակայն պրինցիպալի հաշվին կամ պրինցիպալի անունից և նրա հաշվին կատարել իրավաբանական և այլ գործողություններ»: Գնահատող հանձնաժողովը արձանագրել է նաև, որ ներկայացված համագործակցության պայմանագիրը կարող է համարվել համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիումով)՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1026-րդ հոդվածի, ըստ որի «Համատեղ գործունեության պայմանագրով երկու կամ ավելի անձինք (մասնակիցները) պարտավորվում են միացնել իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համատեղ՝ շահույթ ստանալու կամ օրենքին չհակասող այլ նպատակի հասնելու համար», սակայն այս դեպքում պայմանագիրը կազմելուց չեն պահպանվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված համատեղ գործունեության պայմանագրին ներկայացվող պահանջները, ինչպես նաև Ընկերության հայտը չի համապատասխանել Հրավերի 7.3.2 կետով սահմանված պահանջներին:

Պատվիրատուն գտնում է, որ <<ՀՀԿԳՆԲԸԱՊՁԲ-15/1>> ծածկագրով բաց ընթացակարգի շրջանակներում 16-րդ չափաբաժնի համար Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած որոշման վերաբերյալ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է, քանի որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների վերաբերյալ նշված խախտումները բացակայում են:

3. ԳԲԽ-28/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-28/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ կառավարության 18.12.2014թ. «2015 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման N 12 հավելվածով հաստատվել է «Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումների շարունակություն և զբաղվածության մշակում» ծրագրի շրջանակներում նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների համար գույքի և սարքավորումների ձեռբերում» ծրագրով ձեռք բերվող ուսումնական արհեստանոցների և լսարանների լրակազմերի գնման կարգը: Վերոհիշյալ հավելվածով ներկայացված աղյուսակում նշվել է ծառայության կոդը՝ 80491120-1, ծառայության անվանումը՝ ուսումնական լսարան, չափման միավորը՝ ***հավաքածու*** (N 12 հավելվածի 3691-րդ էջ):

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ուսումնական արհեստանոցների և լսարանների լրակազմի գնման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԿԳՆԲԸԱՊՁԲ-15-1» ծածկագրով բաց ընթացակարգ, որի հրավերը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում ***30.03.2015թ.***:

3. ՀՀ կառավարության 18.12.2014թ. «2015 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման N 12 հավելվածի համաձայն՝ Ընթացակարգի 16-րդ չափաբաժինը ներկայացվել է որպես հավաքածու (լրակազմ), որը ներառել է 18 անվանում ապրանքատեսակ:

4. «ՀՀ ԿԳՆԲԸԱՊՁԲ-15-1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2015թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 8-րդ արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգին մասնակցած «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Ապրանքների իսկության մասին հայտարարության» փաստաթուղթը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ դրա ներկայացումը Հրավերով սահմանված չէ, բացակայել է համակարգչային տեխնիկայի իսկությունը /մատակարարված կամ մատակարարվելիք/ հավաստող՝ արտադրողի կողմից տրամադրված վկայականի բնօրինակը և պատճենը, ինչպես նաև բացակայել է համագործակցության թիվ 15/0515-01 պայմանագրի թիվ 1 հավելվածը: Ընկերությանը առաջարկվել է հստակեցնել համագործակցության թիվ 15/0515-01 պայմանագիրը: Նույն արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ հիմք ընդունելով Կարգի 75-րդ կետը, գնման ընթացակարգի մասնակիցներին առաջարկվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 9-րդ արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատաս-խանությունները չեն շտկվել, մասնավորապես, Ընկերության կողմից չի ներկայացվել համակարգչային տեխնիկայի իսկությունը /մատակարարված կամ մատակարարվելիք/ հավաստող՝ արտադրողի կողմից տրամադրված վկայականի բնօրինակը և պատճենը, համագործակցության թիվ 15/0515-01 պայմանագրի թիվ 1 հավելվածը Ընկերության կողմից ներկայացնելուց և պայմանագիրը որպես գործակալության պայմանագիր հավաստելուց հետո, հանձնաժողովի կողմից ամբողջական պայմանագրի դրույթները ուսումնասիրելու արդյունքում պարզվել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 806-րդ հոդվածի համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված համագործակցության պայմանագիրը չի կարող համարվել գործակալության պայմանագիր: Նույն օրենսգրքի 1026-րդ հոդվածի համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված համագործակցության պայմանագիրը կարող է համարվել համատեղ գործունեության պայմանագիր, ինչի պարագայում Ընկերության հայտը չի համապատասխանի Հրավերի 7.3.2 կետով սահմանված պահանջներին: Հիմք ընդունելով Կարգի 75-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Ընկերության հայտը Ընթացակարգի 16-րդ չափաբաժնի մասով մերժվել է:

6. Պատվիրատուն տրամադրել է «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին արձանագրությունների անբաժանելի մասը կազմող այլ մասնակիցների որակավորման փաստաթղթերը՝ Ընկերության կողմից «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին ստացված ահազանգից հետո:

4. ԳԲԽ-28/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի 20.07.2015թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ կրթության և գիտության նախարարության 27.07.2015թ. թիվ 04/19.3/8646-15 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ կրթության և գիտության նախարարության 27.07.2015թ. թիվ 04/19.3/8646-15 գրության վերաբերյալ՝ Ընկերության 06.08.2015թ. գրությունը, հայտնում է հետևյալը.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդված 1-ին մասի 2-րդ կետը համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է ***բավարար գնահատված հայտեր*** ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ) 75-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում

գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն արձանագրվելու (հայտնաբերվելու) դեպքում՝ գնումները համակարգողը երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկվելու դեպքում, գնահատող հանձնաժողովի որոշմամբ, տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե ներկայացված բոլոր հայտերը չեն համապատասխանում հրավերի պայմաններին, ապա գնման ընթացակարգն այդ հիմքով չկայացած է հայտարարվում:

Գտնում ենք, որ Պատվիրատուն, կնքելով պայմանագիր 43.200.000 (քառասուներեք միլիոն երկու հարյուր հազար, առանց ԱԱՀ) ՀՀ դրամ ընդհանուր գումարով, այն դեպքում, երբ տվյալ չափաբաժնի համար «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով առաջարկվել է պայմանագիրը կատարել 36.000.000 (երեսունվեց միլիոն, առանց ԱԱՀ) ՀՀ դրամ ընդհանուր գումարով, չի խախտել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, քանի որ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքը, ինչը ապահովում է գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը, կիրառվում է ***բավարար գնահատված հայտեր*** ներկայացրած մասնակիցների նկատմամբ, մինչդեռ Ընկերության հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար և մերժվել է՝ Կարգի 75-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն:

2. Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

Նույն մասի 3-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

ՀՀ կառավարության 18.12.2014թ. «2015 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման N 12 հավելվածով

հաստատվել է «Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումների շարունակություն և զբաղվածության մշակում» ծրագրի շրջանակներում նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների համար գույքի և սարքավորումների ձեռբերում» ծրագրով ձեռք բերվող ուսումնական արհեստանոցների և լսարանների լրակազմերի գնման կարգը: Վերոհիշյալ հավելվածով ներկայացված աղյուսակում նշվել է ծառայության անվանումը՝ ուսումնական լսարան, չափման միավորը՝ ***հավաքածու***:

ՀՀ կառավարության 18.12.2014թ. «2015 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման N 12 հավելվածի համաձայն՝ Պատվիրատուն «Ուսումնական լսարան» ծառայությունը (Ընթացակարգի 16-րդ չափաբաժին) նախատեսել է մեկ չափաբաժնով՝ որպես մեկ հավաքածու (լրակազմ), որը ներառում է 18 անվանում ապրանքատեսակ:

Գտնում ենք, որ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից չեն խախտվել Օրենքի 3-րդ հոդված 1-ին մասի 2-րդ կետի, 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի պահանջները, Պատվիրատուի վերոհիշյալ գործողությունը չի խախտել գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը և դրանով վերջինիս կողմից չեն սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

3. ա) ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ, այսուհետ նաև՝ Կարգ) 81-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ համակարգչային և կենցաղային տեխնիկայի ձեռքբերման դեպքում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը մինչև պայմանագրի կնքումը ներկայացնում է գնման առարկայի իսկությունը (մատակարարված կամ

մատակարարվելիք) հավաստող՝ արտադրողի կողմից տրամադրված վկայականի բնօրինակը և պատճենը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ուսումնական արհեստանոցների և լսարանների լրակազմի գնման նպատակով «ՀՀ ԿԳՆԲԸԱՊՁԲ-15-1» ծածկագրով բաց ընթացակարգը կազմակերպվել է մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունները ուժի մեջ մտնելը, ուստի դրա հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով, այն է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ) դրույթներով: Ուստի Պատվիրատուն, Կարգի 81-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մինչև պայմանագրի կնքումը Ընկերությունից պահանջելով ներկայացնել գնման առարկայի իսկությունը (մատակարարված կամ մատակարարվելիք) հավաստող՝ արտադրողի կողմից տրամադրված վկայականի բնօրինակը և պատճենը, գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն:

Պետք է նշել, որ վերոհիշյալ փաստը ընդունել է նաև «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն՝ իր Կենտրոնին ուղղված 06.08.2015թ. գրությամբ: Մասնավորապես, Ընկերությունը նշել է, որ ներկայացված բողոքի մեջ ՀՀ կառավարության 105-րդ որոշման վրա հղում կատարելը սխալ էր:

բ) Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

Գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից չեն խախտվել Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, քանի որ Ընթացակարգի հրավերով սահմանված են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները: Իր հերթին Պատվիրատուն, Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն, ի պատասխան «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի հարցումների, տրամադրել է պարզաբանումներ և հրապարակել դրանք տեղեկագրում:

4. Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պարտավոր է գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթի պատճենը, բացառությամբ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների, տրամադրել ցանկացած անձի՝ վերջինիս կողմից նման պահանջ ստանալուց հինգ օրացուցային օրվա ընթացքում:

Ընկերությունը հաստատել է նաև, որ իրեն տրամադրվել են Ընթացակարգի այլ մասնակիցների ներկայացրած որակավորմանը վերաբերվող փաստաթղթերը միայն Կենտրոնի թեժ գծին դիմելուց հետո:

Գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, քանի որ վերջինս պարտավոր էր գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթի պատճենները տրամադրել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին՝ նրա կողմից նման պահանջ ստանալուց հինգ օրացուցային օրվա ընթացքում, մինչդեռ ընթացակարգի այլ մասնակիցների ներկայացրած որակավորմանը վերաբերվող փաստաթղթերը Ընկերությանը տրամադրվել են Կենտրոնի թեժ գծին ահազանգելուց հետո:

Միևնույն ժամանակ գտնում ենք, որ նշված խախտումը չի կարող հիմք հանդիսանալ «ՀՀԿԳՆԲԸԱՊՁԲ-15/1» ծածկագրով բաց ընթացակարգի 16-րդ չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովի պայմանագիր կնքելու մասին որոշումը չեղյալ հայտարարելու և նոր ընթացակարգ հայտարարելու համար, առավել ևս, եթե

Պատվիրատուն, Կենտրոնի թեժ գծին ահազանգ ստանալու արդյունքում, Կարգի 137-րդ կետի համաձայն՝ ընդունել է կատարված խախտումը և անմիջապես վերացրել այն: Նշված խախտումը չի կարող նաև հիմք հանդիսանալ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու համար, քանզի Ընկերության որակավորումը հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չեն շտկվել և այդ հիմքով տվյալ մասնակցի հայտը մերժվել է:

5. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 806-րդ հոդվածի համաձայն՝ «Գործակալության պայմանագրով մի կողմը (գործակալը) պարտավորվում է վարձատրությամբ մյուս կողմի (պրինցիպալի) հանձնարարությամբ, իր անունից, սակայն պրինցիպալի հաշվին կամ պրինցիպալի անունից և նրա հաշվին կատարել իրավաբանական և այլ գործողություններ»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1026-րդ հոդվածի համաձայն՝ «Համատեղ գործունեության պայմանագրով երկու կամ ավելի անձինք (մասնակիցները) պարտավորվում են միացնել իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համատեղ՝ շահույթ ստանալու կամ օրենքին չհակասող այլ նպատակի հասնելու համար»:

Հրավերի 7.3.2. կետի համաձայն՝ մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով); ***Նման դեպքում մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:***

Ընկերության կողմից ներկայացված «Կոմպմարկետ» և «Եվրոֆուրնիտուրա» ՍՊԸ-ների միջև 15.05.2015թ. կնքված «Համագործակցության պայմանագիր 15/0515-01» ուսումնասիրությունից հետևում է, որ այն չի կարող դիտվել որպես գործակալության պայմանագիր, ինչպես դա պնդում է Ընկերությունը, քանզի այն չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 806-րդ հոդվածով գործակալության պայմանագրին ներկայացվող պահանջներին:

Վերոհիշյալ պայմանագրի բովանդակությունից բխում է, որ այն հանդիսանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1026-րդ հոդվածի իմաստով համատեղ գործունեության պայմանագիր: Սակայն տվյալ դեպքում անհրաժեշտ է, որ վերոհիշյալ պայմանագրում, Ընթացակարգի Հրավերի 7.3.2. կետի համաձայն, նախատեսված լինի մասնակիցների համատեղ և համապարտ պատասխանատվություն, ինչը տվյալ դեպքում բացակայում է:

Գտնում ենք, որ այս մասով ևս Պատվիրատուի կողմից չեն խախտվել Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, քանի որ հրավերով սահմանվել են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները, այդ թվում նաև համատեղ գործունեության պայմանագրի դեպքում մասնակիցների համատեղ և համապարտ պատասխանատվություն կրելու պահանջը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք մերժել ՀՀ կրթության և գիտության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԿԳՆԲԸԱՊՁԲ-15-1» ծածկագրով բաց ընթացակարգը 16-րդ չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովի պայմանագիր կնքելու մասին որոշումը չեղյալ հայտարարելու և նոր ընթացակարգ հայտարարելու, կամ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու պահանջների վերաբերյալ Ընկերության 20.07.2015թ. Կենտրոնին ներկայացրած բողոքը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-28/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Վարդանյան